[1] Դուրս գրման ամսաթիվ			**Հաշիվ վավերագիր** (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
17	Ապրիլ	2019 թ.		Բ	3867712946
[4] Մատուցման ամսաթիվը					
17	Ապրիլ	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	6	3	6	7	8	1		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										

[10] Անվանումը	«ԱՎ ԷՔՍՊԵՐՏ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)	
[11] Բանկային տվյալները	Արդշինբանկ	N 2470103343210000
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ ԹԻՎ 48	
[13] Լրացուցիչ տվյալներ		

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								

[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[17] Բանկային տվյալները		N 900011000834
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[19] Լրացուցիչ տվյալներ		
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր — Համար	
	Լիազորագիր — Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N N Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Ձեռչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	թիվ 63202516 քր գործով դատահաշվապահական և ֆինանսատնտեսական հմայիր փորձաքննություն	հատ	1	300000		300000
Ընդամենը						300000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GRIGORYAN NAREK 1514930757

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

17/04/2019 12:26:27

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Դատահաշվապահական և դատատնտեսագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

11 օգոստոսի 2017թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Է.Ս.Կարապետյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 63202516 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2016 թվականի փետրվարի 22-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունից ստացվել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ-ի կալանավոր Գևորգ Ժորայի Անդրեասյանի հաղորդումն այն մասին, որ 2011 թվականից հիմնադրել է <<Գոլդուեյ>> ՍՊ ընկերությունը, որի տնօրեն 2013 թվականին իր կողմից նշանակվել է Լիանա Ավագյանը: Վերջինիս օրոք առանց իր իմացության նշանակվել է մեկ այլ տնօրեն, ով ընդհանրապես իրազեկված չի եղել և որևէ մասնակցություն չի ունեցել ընկերության գործունեությանը: Լիանա Ավագյանը և Արման Հակոբյանը օգտվելով այն հանգամանքից, որ ընկերության կնիքը գտնվել է իրենց մոտ, այլ ոչ թե նոր տնօրենի, բազմիցս կատարել են փաստաթղթային կեղծիքներ, կեղծել են նոր տնօրենի ստորագրությունը և յուրացրել են ՍՊ ընկերությանը պատկանող մոտ 85.000.000 ՀՀ դրամ գումար, ինչպես նաև տարբեր արժեքների ընկերությանը պատկանող գույքեր, 3 կգ-ից ավել արծաթյա զարդեր, գործարանային արտադրության թանկարժեք տարբեր հարգի էտալոններ, <<Օրիգինալ>> վերտու բջջային հեռախոս, փաստաթղթեր:

Դեպքի առթիվ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում նախապատրաստված նյութերով 18.03.2016թ. որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժել՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով:

Հիշյալ որոշման դեմ 02.04.2016թ. բողոք է ներկայացրել Գևորգ Անդրեասյանը՝ խնդրելով վերացնել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը, որպես հիմնավորում նշելով, որ այն անհիմն է և չի կատարվել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

2016 թվականի ապրիլի 15-ին Երևան քաղաքի դատախազի կողմից որոշում է կայացվել և քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացվել է և ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 63202516 քրեական գործը, որն էլ ստացվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին և կատարվում է նախաքննություն:

Որպես վկա հարցաքննվել է Արման Հակոբյանը, ով իր ցուցմունքով հայտնել է, որ հանդիսանում է Գևորգ Անդրեասյանի քրոջ ամուսինը, իսկ վերջինիս

ձերբակալվելուց հետո, նրա խնդրանքով կազմակերպել և ղեկավարել է <<Գոլդուեյ>> ՍՊ ընկերության գործունեությունը: Հայտնել է, որ ընկերությունը ունեցել է ամենից շատ ամսեկանը մոտ 700.000 ՀՀ դրամի շրջանառություն, չի եղել նման դեպք, որ ընկերությունը ունենա օրեկան 110.000 ՀՀ դրամ գումարի եկամուտ:

Որպես վկա հարցաքննվել է նաև Լիանա Ավագյանը, ով իր ցուցմունքով հայտնել է, որ տնօրեն նշանակվելուց հետո ինքը ձևական է կրել տնօրենի պարտականությունները, իսկ Գևորգ Անդրեասյանի ձերբակալվելուց հետո, արդեն շփվել է տարբեր անձանց հետ, այդ թվում հարկային մարմինների, որի ժամանակ տեղեկացել է ընկերության պարտավորությունների մասին: Այդ ընթացքում բազմիցս խնդրել է Գևորգ Անդրեասյանի մորը, որպեսզի վերջիններիս կողմից իրենց բարեկամներից որևէ մեկը ստանձնի տնօրենի պարտավորությունները, ինչի կապակցությամբ նման պատրաստակամություն է հայտնել Ժորա Անդրեասյանը և վերջինս նշանակվել է տնօրեն: Հայտնել է, որ ընկերությունը ամենից շատ ունեցել է ամիսը մոտ 700.000 ՀՀ դրամի շրջանառություն, այլ ոչ թե օրեկան մոտ 110.000 ՀՀ դրամի եկամուտ, իսկ գումարային հարցերը տնօրինվել է Գևորգ Անդրեասյանի քրոջ ամուսին՝ Արման Հակոբյանի կողմից:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի աշխատակազմից ստացված գրության համաձայն՝ <<Գոլդուեյ>> ՍՊԸ-ի շրջանառությունը 2013 թվականի և 2014 թվականի 1-ին եռամսյակում կազմել է 17.775.780 ՀՀ դրամ, իսկ 2014 թվականի երկրորդ եռամսյակից մինչև 2015 թվականի 4-րդ եռամսյակը ներառյալ, կազմել է՝ 11.315.817 ՀՀ դրամ գումար:

Որպես վկա հարցաքննվել է Գևորգ Անդրեասյանը, ով իր ցուցմունքով պնդել է հաղորդման մեջ նշված հանգամանքները՝ միաժամանակ նշելով, որ <<Գոլդուեյ>> ընկերության նոթ-բուք դյուրակիր համակարգիչը, որի մեջ առկա է եղել համապատասխան ծրագիր, որով աշխատել է գրասենյակը, այն ջնջվել է Արմեն Հակոբյանի և Լիանա Ավագյանի կողմից, որն էլ ինքը վերականգնել է տվել և դրանց վերաբերյալ հիմնավորող փաստաթղթերը ներկայացրել է քննչական բաժին: Վերջինս ներկայացրել է քննչական բաժին նաև հիշյալ նոթ-բուք դյուրակիր համակարգիչը:

Գևորգ Անդրեասյանի կողմից ներկայացվել են նաև համակարգչի ծրագիրը վերականգնած տվյալները՝ էլեկտրոնային կրիչով, համաձայն որի զննության՝ Գևորգ Անդրեասյանի կողմից ներկայացրած <<Գոլդուեյ>> ՍՊ ընկերության շրջանառության վերաբերյալ տեղեկությունները, որն իր մեջ պարունակում է 19.10.2014թ. մինչև 18.12.2015թ. ժամանակահատվածը, այդ ընթացքում այն կազմել է 32.415.100 ՀՀ դրամ:

Որպես վկա հարցաքննվել է նաև ծրագիր ստեղծող՝ Արամ Նազարեթյանը, ով ցուցմունք է տվել, որ մոտ 6 տարի առաջ իրեն է դիմել Գևորգ Անդրեասյանը՝ հարգորոշման և հարգադրոշման ծառայություն մատուցելու նպատակով համապատասխան ծրագիր ստեղծելու համար: Պատվերի համաձայն, պատրաստել է համապատասխան ծրագիրը, որից հետո այն տեղադրել է նրա գրասենյակի համակարգչի մեջ: Որոշ ժամանակ անց, արդեն 2016 թվականի գարնանը, իրեն զանգահարել է Գևորգ Անդրեասյանը և խնդրել գնալ գրասենյակ և ստուգել ծագիրը,

քանի որ այն ջնջված է: Իր կողմից ստուգվել է այն և պարզվել, որ իրականում ծրագիրը ջնջված է, որն իր մեջ պարունակել է նախկին շրջանառության վերաբերյալ տեղեկություններ, որն էլ Գևորգ Անդրեասյանի խնդրանքով վերականգնել է: Հայտնել է, որ նշված ծրագիրը մինչ վերականգնելը ինքը վերցրել է էլեկտրոնային կրիչով, իսկ համակարգչի մեջ առկա ծրագիրը ջնջել է Գևորգ Անդրեասյանի պահանջով: Վերականգնած տեղեկությունները տրամադրել է Գևորգ Անդրեասյանին, թե էլեկտրոնային և թե թղթային տարբերակով: Հայտնել է, որ ծրագիրը կոչվում է <<Արամի ծրագիր>>, քանի որ այն ինքն է ստեղծել, որը գործում է տարբեր ռեստորաններում և այլ վաճառքի կետերում:

Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով, որ քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատահաշվապահական և տնտեսագիտական հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Թիվ 63202516 քրեական գործով նշանակել դատահաշվապահական և դատատնտեսագիտական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Հույս և Օրենք>> ՍՊ ընկերությունը:
2. Պարզաբանման համար առաջադրել հետևյալ հարցերը.
- 22.03.2014թ.-ից 01.02.2016 թվականն ընկած ժամանակահատվածում <<Գոլդուեյ>> ՍՊԸ-ի կողմից ծավալած ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ընկերության համախառն եկամուտը (հասույթը) որքան է կազմել:
- 22.03.2014թ.-ից 01.02.2016 թվականն ընկած ժամանակահատվածում <<Գոլդուեյ>> ՍՊԸ-ի կողմից ծավալած ձեռնարկատիրական գործունեության արդյունքում համախառն եկամտի ստացման համար անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված որքան և ինչ տեսակի ծախսեր է կատարվել:

3. Փորձաքննությանը տրամադրել սույն որոշումը, իսկ քրեական գործից համապատասխան նյութերի պատճենները կտրամադրվեն առաջին իսկ պահանջի դեպքում:

4. Փորձագետներին իրավունք վերապահել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև նշված չեն սույն որոշման մեջ, սակայն կառաջանան փորձաքննության կատարման ընթացքում, կմտնեն վերջիններիս իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

5. Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ Է.Ս.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ